**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 Փետրվարի 2018թ. N 7**

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածների համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Գեղարքունիք համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ Գեղարքունիք համայնքի ավագանին անդամների միաձայն կողմ քվեարկությամբ որոշում է՝

1. Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերածևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանի՝

7 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

Недействительная подпись

X

**Գեղարքունիք համայնքի ղեկավար** **Կ. Ասատրյան**

**Կ.Տ**